

անոր ապանջականութիւն տալէ առաջ իր երկասիրութեան մէջ՝ ուրիշ շատ մը բոյսերու և ծաղիկներու կարգին, որոնց համար ամենուրեք ղիմուաներ կ'ընէր, տեղեկութիւններ կը խնդրէր, ինչպէս գիտեն «Հայրասակ» ի նախաբանը կարդացողները:

Մեղուածադիկը՝ նախ քան Ալիշանի գրքին երևումը՝ տարիներ առաջ կը մտնէ ուրիշ երևելի Մխիթարեանի մը՝ Հ. Մանուէլ Վ. Գալուսեայ հոյակապ երկասիրութեան մէջ՝ այսպէս. CÉRINTHE — Մուսկապիկ կամ լաւ ևս Մեղուածադիկ. — Բոս. ծաղիկ ինչ յոյժ հաճոյական մեղուաց, որ և ասի MÉLINET »: Վերջնոյս համար ալ

կը դնէ. « Բնիկ րարեխան և հարաւային կողմանց Երրուպայ, համադիր և պարզ տեղեւոյք՝ և ծայրարայոս ողիւզաձև ծաղկամբք, որք հաճոյական են մեղուաց, յորոց ժողովեն զգիտք մոմոյ »:

Իսկ Հ. Ալիշան Հայրասակի մէջ ասպէս կը ներկայացնէ իր սիրաւուան ծաղիկը. « Մեղուածադիկ խոտեղեն մի՝ որոյ արմատն սոյս կամ տակ ունի, իսկ ծաղիկն պէսպէս զոյներով և ձեռով մեղրոյի նմանութիւն ունի, որոյ համար այսպէս կոչեն Պոնտացիք »:

Հ. Ղ. ՏԱՅՆԱՆ

1. Բաղդիր Սր. և Գիտարեանց,
2. Հայրասակ, Խ. 1895, էջ 841.

ԳՆԱՀԱՏԱՆՔ Հ. ԱԼԻՇԱՆԻ ՀԱՆՃԱՐԻՆ

(Իր Գրեւելեանն ու մանուսք առիթ)

« Երբ Հ. Ղեռնդ Ալիշան... Հին Հայաստանի աշխարհագրութեան և Հայոց պատմական — մատենագրական կենդանի ճիւղին մէջ առանց երկբայութեան առաջին տեղն կը զբաղէ այսօր իր բազմաթիւ և մեծազոր երկասիրութեամբք: Իսկ իբրեւ բանաստեղծ՝ արդեամբք հայր է արեւմտեան զանէ արդի քարբառով գրող հայ բանաստեղծներուն, որոնցմէ նշանաւորագոյնք իւր ձեռատուն աշակերտքն են:... Այս մեծարգոյ Յոբելինաւորն արդեամբ քչ միայն այս դարուս՝ այլ և բովանդակ հայ մատենագրութեան ամենանշանաւորաց կարգը կը բարձրանայ իւր երկասիրութեամբք:...

(ՀԱՆՈՒՆ ԱՄՍՈՐԵԱՑ, 1890 Յոբել)

« Զեր յոբելեան տօնախմբութիւն մըն է վասն հայ ազգին, որուն փառքն էք իբրեւ բանաստեղծ, հոյակապ գրագէտ, հրապարակագիր, աշխարհաբան, պատմաբան, հնագէտ. հանճեցէ ընդունիլ զյարգանս իմ պահանջման, և եղբայրական բարեմաղթութիւններ »:

(ԽՈՐԵՆ ԱՐԵՎԳԻՍԿ. ՆԱՐԳԵՑ)

« Առ յարգամեծար մեծ արժանաւոր, պատմագիրն, աշխարհագէտն, հնագէտն, վիճագէտն,

թարգմանիչն, բանաստեղծն, գրագէտն, առաքէ ջերմագին բարեմաղթութիւնս »:

ՕՐՄԱՆԵԱՆ ԱՐԵՎԵՍ.

Հայր Ղեռնդ Ալիշանը դարուս հայկական հանճարի ներկայացուցիչն է. իբրեւ բանաստեղծ, բոլոր բանաստեղծների նահապետն է, իբրեւ կեղեցական՝ մի Շնորհալի է, իբրեւ գիտնական՝ մի հանրագէտ է:

« Տարագ » 1901, էջ 401 (Ղ. ԱՂԱՏԱՆԵՍ)

Պարթև հասակով, թիկնեզ և վեհաշուք ծերունի մը կը սպասէի գտնել [զՀ. Ալիշան], և տեսայ փորդիկ, թիկն, գրեթէ աննիւթ էակ մը որ գետնին վրայէն կը սահէր աւելի քան կը քալէր, և որ իր թռչնակի վզին վրայ կը կրէր երկրպագելի զուլն մը ալեւոր մանուկի — ծերոսքած հրեշտակ մը կարծես որ երկնքէն փախեր մեր մէջն էր եկեր իր բիւրեղէ երգովը պահ մը մեր ցաւերն անուշցնելու համար և որ կ'արտօնար սակայն վայրկեան մը առաջ վերաթռիլ զէպ ի իր հեռաւոր օդակառոյց կապոյտ բոյնը որուն կարօտն ունէր միտս:

« Ահաբա » 1902. էջ 79 (ԱՐԵՎԱ ԶՕՊԱՆԵԱՆ)
Եւ այլն, և այլն և այլն: